

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղամյանի նամակներից

I

Իմ թանկագին բարեկամ Նինա Ռոզոմինա¹, ստացա 3. 11
Ձեր նամակը և շատ, շատ ուրախացա...

...Այստեղ իմ հետաքրքրությունների շրջանակն ընդլայնվել է մի նոր թեմայով, որը դեռ ոչ մի կերպ չի հաշտվում ինչպես հարկն է առաջ մղելու Այդ թեման հայ էսթետիկական մտքի պատմությունն է (սկսած 5-րդ դարից)։ Սակայն ուզում եմ հուսալ, որ Հայաստանում գիտությունների ակադեմիայի կազմակերպման հետ,— որի համար մենք բոլորս անշափ ուրախ ենք,— առավել նպաստավոր կազմակերպական պայմաններ կստեղծվեն նաև այս՝ ինձ համար ծայրաստիճան հետաքրքրական թեմայի համար։ ...Աշխատանք է սպասվում նաև Ռ. Մելիքյանի անվան կարինետում (երաժշտական գիտահետազոտական)։ Իր պլանով, նաև հնարավորություններով՝ այդ կարինետը շատ հարուստ հիմնարկություն է, ի դեպ, գիտությունների ակադեմիայի տնօրինությանն անցնող։ Այն ունի երկու հիմնական բաժին. 1-ին՝ ֆուլկոր, և 2-րդ՝ հայկական երաժշտության պատմություն և տեսություն։ Դրան ավելացրեք նաև ձայնադաշնների պաշարը՝ ապարատությունով, շատ արժեքավոր արխիվային նյութը, հարուստ գրադարանը, ժողովրդական գործիքների ծրագրված թանգա-

¹ Նինա Իվանովնա Ռոզոմինա (Մոսկվա), արվեստագիտության թեկնածու, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ։

բանը և այլն, և Դուք կպատկերացնեք այդ կարիքներում տար-
վելիք աշխատանքի հետաքրքրությունը... Եվ գիտե՞ք՝ էլ ինչ
կարող եմ Ձեզ հայտնել։ Նույն վերնագրով, ինչ Տաշքենդում
և Լենինգրադում, ինձ համար բոլորովին նոր դասընթաց եմ
կարդում այստեղ։ Ես չեմ ձևափոխում և չեմ թարմացնում
հինը, արդեն բազմիցս կարդացվածը, ես, ասես դատարկ
տեղում, կառուցում եմ նորը։ Իմ առջև ծագում են այնպիսի
հարցեր, որոնք չեն ծագել «այնտեղ», ինքնաբերաբար առա-
ջանում են պատասխաններ, որոնք չէին էլ ենթադրում «այն
ժամանակ»։ Եվ, ի՞նչ թաքցնեմ։ Որքան հաճախ ես անհար-
մար եմ զգում, որ այդչափ դժգույն ու երկչուտ էր իմ
մտքի աշխատանքը ինձ այնպես հավատով լսող մարդկանց
հետ շփվելիս։ Հիշեցեք այդ, քանի որ երբեք Ձեզ հետ էլ կա-
րող է պատահել նմանօրինակ սահմանություն։ Ընկատազիր
մեզ բաժանեց, և ես չեմ կարող կիսել Ձեզ հետ այն ամենը,
ինչ այժմ հուզում է ինձ։ Իսկ ինչ վերաբերում է համալսա-
րանական լսարանին, ապա շատ հաճախ ինձ անհանգստաց-
նում է կասկածը. լսել նրանք կարողանում են, իսկ կկարողա-
նա՞ն, արդյոք, թեկուզ մեկ օր ապրել քո մտքերով։ Այդ
իմաստով ես էլ եմ պատրաստ խոստովանելու իմ որոշ մե-
կուսացվածությունը։ Սակայն զրուցել ու վիճել երբեմն ստիպ-
ված եմ լինում։ Մոտ մեկ ամիս առաջ կարդացի մի երա-
ժըշտագետի՝ երաժշտության պատմաբանի (Նախկին լենին-
գրադցի սան) աշխատանքը Զայկովսկու, նրա սիմֆոնիզմի
մասին։ Շատ ժամեր ծախսեցի այն բանի վրա, որ բացատ-
րեմ, թե սիմֆոնիզմն հասկացությունը ընդգրկում է ոչ թե
ստեղծագործական հնարների ու արտահայտչական միջոցնե-
րի համակարգ, այլ անպայմանորեն բովանդակության ինչ-
որ որոշակիություն, և առայժմ պարզ չէ, «ի՞նչի մասին» է
ուրույն կերպով խոսում սիմֆոնիզմը, անօգուտ է բացատրել,
ինչպես է այդ մասին խոսում նա։

Հիշում եմ ինչ-որ ժամանակ ոմանց դուր եկած խոսակցու-
թյուններն ու մտքերը Շուբերտի, Շոպենի, Մոմանի և այլոց
մոտ փոքր ձևերում սիմֆոնիզմի մասին... Ինչպես զլխի
չեն ընկնում, որ այդ ժանրի և այդ ձևի սահմանման դժվա-
րությունները նրանցում արտացոլվածի սահմանման դժվա-
րության մեջ են, և դրանից էլ առավել դժվար է ու պետք է

սկսելու իմ երևանցի գրուցակցին ևս բացատրեցի, որ անձնականի ու վերանձնականի (աստված մի արասցն՝ ոչ «վերամարդկայինի») կապերի պրորլեմից դուրս ոչինչ հնարավոր չէ հասկանալ ո՛չ Չայկովսկու սիմֆոնիաներում, ո՛չ այդ միասնական պրորլեմից անշատված ուսմանսների պրորլեմում, որ հետազայում այդ կապից դուրս չի հասկացվի նաև սիրո հնչող թեմայի դերը Չայկովսկու երաժշտության մեջ, որ Բեթհովենի ու ուսմանտիկների սինթեզից դուրս չի հասկացվի նրա սիմֆոնիզմը, չի հասկացվի, թե ինչու էլի շատ ուրիշ բաներ են կատարվում Չայկովսկու սաեղծագործության մեջ, որի մասին առավել հարմար կլինեն խոսել Ջեզ հետ հետաքրքրական մի գրույցի մամանակ, երբ, ի դեպ, ևս կվորձեի անցկացնել աշխարհայացքային դժի զարգացումը ըստ շրջանների՝ Մուսորգսկի-Չայկովսկի-Սկրյաբին:

Այստեղի գրույցներից հավանաբար կարելի է հիշատակել և այն, որ մեր մեկ այլ ընկերոջ՝ Նույնպես մանկավարժի, լենինգրադի կոնսերվատորիայի սանի, ևս տեղորի ևմ ենթարկում նրանով, որ առանց բացատրության հրաժարվում ևմ հասկանալ՝ ինչ են իրենցից ներկայացնում լիրիզմ, ընդհանրացում, կերպար և նման այլ գործածական բառերը:

Իսկ իմ մեկ այլ բարեկամի էլ նեղում ևմ նրանով, որ համառորեն ձգտում ևմ պարզել՝ ի՞նչ է պոլիֆոնիան, ի՞նչ է «երկու և ավելի անհատականացված և զուգակցված տարրերի միաժամանակյա հնչումը», քանզի գտնում ևմ, որ եթե... «պոլիֆոնիան», որպես կոմպոզիցիոն սկզբունք, հեշտովյամբ կարող է հասկացվել որոշակի մեկ սահմանումով, ապա այն իր բովանդակության տեսակետից այնքան դիֆերենցված է, որ սահմանումների մեջ էլ Նույնն է պահանջում: Իհարկե, պոլիֆոնիա ըկա այնտեղ, ուր իսպառ բացակայում է զուգակցումը: Բայց զուգակցումն ինքը և կյանքում, և (նրա միջոցով) արվեստում բազմատեսակ է ու բազմաբան... Պոլիֆոնիկ գրականության մեջ կան (և չեն կարող լինել) զուգակցման այս բուրր տեսակների նմուշները, ասենք՝ 1. խորալներ, քալերգեր, 2. երգեր (լիրիկական)՝ բազմաձայն եզագակցությամբ, Բախի շատ ֆուգաներ, 3. «Ծվգենի Օնեգինից» «Թշնամիների...» տիպի զուգերգեր, Բախի ֆուգաներից՝

lis-moll-ը 1-ին հատորից, «Պիկովայա դամայի» նախերգանքի այն մասը, ուր «սիրո» թեման սկսում են տրամբանները շուրթակների առտինանաբար իշնող հնչերանդին զուգընթաց և այլն:

Ի դեպ, ես ինքս զգում եմ, որքան այդ ամենը ծանր (կամ երևի եմբերային-թեթև) է հնչում նամակի այս հակիրճ շարադրանքում:

Ավելի լավ է Ձեր մասին խոսենք: Ես հանդուրժողաբար եմ վերաբերվում Ձեր քիչ կարգալուծ, եթե,— ինչպես համոզված եմ,— քիչ շեք մտածում: Տիկին Բովարիի կապակցությամբ կուզեի ասել՝ իհարկե, Դուք շատ բան եք նշել, որ կա վեպում, բայց նկատել եք արդյոք նրանում այն կարևորը, ունի ընկնողը, ինչին վաղուց ուղղված է ուղադրությունը, և որի մեջ է, անձամբ ինձ համար, այդ ստեղծագործության հիմնական հետաքրքրությունը. ես նկատի ունեմ այնպես կոչված «բովարիզմը»՝ իրականից դուրս, երևակայական աշխարհում ապրելու ընդունակությունն ու հակումը, որ և հատուկ էր դժբախտ Բովարիին և որն էլ հենց նրան հասցրեց ողբերգական վախճանի: Ի դեպ, Դուք հավանաբար ինքներդ այդ կողմին ուղադրություն դարձրել եք, և դա լավ է, քանզի ինչ-որ շափով, թեկուզ շատ շնչին, այդ սկզբնական շրջունակությունը հատուկ է մեզներից յուրաքանչյուրին: Հիշեցեք, ում մոտ է պատմվում այն մասին, թե ինչպես էին նրանք սիրում առժամանակ լքել միմյանց, որպեսզի հնարավորություն ունենան իրար նամակներ գրելու Երևակայեցեք՝ որքան շատ էին նրանք սիրում միմյանց, բայց միաժամանակ մտածեց և այն մասին, թե հատկապես ինչ ձևով էին նրանք սիրում: «Բովարիզմը», թերևս, այնքան էլ վատ բան չէ փոքրը դողաներով, իսկ մեծ դողաներով, ինչպես տիկին Բովարիի մոտ, սարսափելի է, ողբերգություն, բայց և՛ «դճիմություն», հիվանդություն ու մահ: Սակայն ես, ըստ երևույթին, բաց գոնե եմ բախում...:

Ձե՛ր Ա. ԱՂԱՄՅԱՆ

4—15 / 12. 43 թ.

Նրևան

Վիլի Սարգսյանի հետ զրույցից հետո¹

Սիրելի Վիլի, մեր այսօրվա զրույցը Ռախմանինովի կոնցերտի երկու տարբերակների մասին, կարծում եմ, օգտակար է և ուսանելի։ Ուզում եմ փորձել հակիրճ և թեղիսենքով շարադրել այն ու ներկայացնել քո դատին։

Եվ այսպես, առաջին. I կոնցերտի երկրորդ խմբագրությունը հնարավոր էր այն պատճառով, որ այն հասուն վարպետի տեսակետից զարգացնում էր կյանքի այն մոտիվները, որոնք առաջին խմբագրության մեջ առկա էին ոչ զարգացած ձևով։ Պնդելով այդ՝ դու պատրաստ ես նոտաների վրա զուգահեռաբար ցույց տալու համապատասխան տեղերը երկու խմբագրություններում։ Ի դեպ, ինձ առանձնապես դուր եկավ և հիշվեց այն տեղը, երբ լիրիկականը իրական վիճակից դնում է դեպի վերապրված անցյալի վիճակը։ Ես կօգտվեմ առաջին իսկ պատեհ առիթից՝ խնդրելու քեզ ներկայացնել այդ կենդանի հնչողությամբ։ Պատկերացնել, իբր երկրորդ խմբագրությունը սկզբունքորեն նոր զաղափարաէմոցիոնալ մոտիվներ է մտցրել, որոնք իսպառ բացակայում են առաջին խմբագրության մեջ, դու արգարացիւրեն nonsen's ես համարում։

Երկրորդ. պատանեկան մոտիվների ոչ հասուն լինելը բնական է։ Սակայն արդյոք դրանից բխում է, թե պետք է բնական, այսինքն՝ բանական, ճիշտ, գեղարվեստորեն տեղին համարել այն, որ արվեստագետը արդեն հասուն տարիքում վերստին մեծավարի խմբագրում է իր ոչ հասուն պատանեկան ստեղծագործությունը։ Պե՞տք է արդյոք այդ փորձը դրական համարել։ Արդյոք ճիշտ չէ՞ր լինի, ընդհակառակը, ընդունել, որ պետք է հնարավորություն տալ յուրաքանչյուր տարիքի մնալու իր բնական բնույթով, և թույլ տալ կյանքի պատանեկորեն ոչ հասուն մոտիվներին հնչելու իրենց իսկա-

¹ Վիլի Վահանի Սարգսյան, ՀՍՍՀ ժառանգավոր արտիստ, Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր։

կան տեսքով: Կարծում եմ՝ դա անկասկած ալդպես է: Գու էլ
ես պնդում, որ առաջին խմբագրությունը գրավում է իր ան-
կեղծությամբ ու անմիջականությամբ, ինչ չի կարելի ասել
երկրորդ խմբագրության մասին: Բացի այդ, դու պնդում ես,
որ երկրորդ խմբագրության մեջ կան արհեստականորեն
լրացված տեղեր, ինչը չի կարող չիջեցնել ամբողջի զեղար-
վեստական մակարդակը: Հետևաբար, դու հանդում ես այն
էղրակացության, որ առաջին խմբագրության մեջ սուբյեկ-
տիվ ռախմանինովյան մոտիվների առկայությունը ոչ զար-
գացած ձևով թեև հնարավորություն տվեց երկրորդ խմբա-
գրության փորձն՝ անելու, բայց դեռևս չի կարող ամբողջո-
վին և մինչև վերջ բացատրել ու արդարացնել այդ փորձը:

Սրբորդ. չկա՞ արդյոք Ռախմանինովի փորձը բացատրող
ու արդարացնող օբյեկտիվ նշանակության հիմք: Կա, և այդ
մոտիվը... ազգային երիտասարդ երաժշտության համար
սկզբունքային նշանակություն ունի: Այդ բուն կատարողա-
կանության զեղարվեստական արժեքն է, տվյալ դեպքում՝
կոնցերտի ձևի նշանակությունը, և՛ դաշնամուրի, և՛ նվագա-
խմբի օգտագործումը, նրանց փոխհնչողությունը: Սրան Ռախ-
մանինովը հսկայական նշանակություն էր տալիս, և այդ
մասին կարելի է դատել նրա իսկ մտքերից՝ իր պատանեկան
տարիների այս ստեղծագործությանը վերաբերող դիտողու-
թյուններից: